ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան 21» 07 2017թ. № 701-Ա

ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ՈՐՊԵՍ ԷՏԱԼՈՆԱՅԻՆ (ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ) ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 206-Ն որոշման հավելվածի 16-րդ կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի 1229-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի «դ» ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել մրցութային հանձնաժողով՝ փորձարկման լաբորատորիան որպես էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչելու նպատակով:

2. Հաստատել մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն Հավելված N 1-ի:

3. Հաստատել մրցութային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանին:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի
2017 թ. ---------- -------
N -Ա հրամանի

ԿԱԶՄ
ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ՈՐՊԵՍ ԷՏԱԼՈՆԱՅԻՆ (ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ)
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Անի Օբոսյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար/հանձնաժողովի նախագահ,
Աշխեն Շիրվանյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության բաժնի պետ (համաձայնությամբ),
Հեղինե Ղարիբյան	ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի սննդամթերքի անվտանգության հետազոտությունների բաժնի պետ (համաձայնությամբ),
Նարինե Քարամյան	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի Լաբորատորիաների, տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների հավատարմագրման բաժնի

	պետ (համաձայնությամբ),
Էդուարդ Կիրակոսան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության գործադիր տնօրեն (համաձայնությամբ),
Գարիկ Մարտիրոսյան	«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի Ստանդարտ նմուշների լաբորատորիայի վարիչ (համաձայնությամբ),
Բաբկեն Պիպոյան	«Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
Աշոտ Միրզոյան	«Սպառողների աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
Նելլի Մուրադյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ;
Ժաննա Զաքարան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության որակի ենթակառուցվածների բաժնի գլխավոր մասնագետ/ քարտուղար:

Հավելված N 2
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի
2017 թ. ---------- -------
N -Ա հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են փորձարկման լաբորատորիան որպես էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչելու նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողովի) գործառույթներն ու գործունեության կարգը:

2. Հանձնաժողովը կազմվում է փորձարկման լաբորատորիայի կողմից որպես էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչվելու համար ներկայացված էլեկտրոնային հայտի և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև փորձարկման լաբորատորիան որպես էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչելու գործընթացներն իրականացնելու նպատակով:

3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 206-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է թափանցիկության և անկողմնակալության սկզբունքներով:

5. Հանձնաժողովը կազմված է նախագահից, քարտուղարից և 8 անդամներից:

6. Հանձնաժողովի կազմում ընդգրկված են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության 2, իրավաբանական բաժնից, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ ԳՆ սննդամթերքի

անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ից, «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ից, «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ից, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունից, ինչպես նաև 2 հասարակական կազմակերպություններից մեկական աշխատակիցներ:

7. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են ըստ անհրաժեշտության՝ մրցութային կարգով՝ փորձարկման լաբորատորիայի կողմից որպես էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչվելու համար ներկայացված հայտի ընդունման դեպքում՝ նիստերի միջոցով:

8. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է քվեարկության ձայնի իրավունք ունեցող Հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

9. Հանձնաժողովի նիստերը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում, Հանձնաժողովի որոշմամբ՝ Հանձնաժողովի մեկ այլ անդամ:

10. Հանձնաժողովի նախագահը՝

1) փորձարկման լաբորատորիան որպես էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչելու նպատակով հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հրավիրում է նիստ,

2) ղեկավարում և համակարգում է Հանձնաժողովի ընդհանուր գործունեությունը,

3) հայտին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո Որոշման 18-րդ կետով սահմանված կարգով գնահատման արդյունքում Որոշման 20-րդ և 21-րդ կետերով սահմանված դեպքերում 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին ներկայացնում է տվյալ փորձարկման լաբորատորիան որպես էտալոնային լաբորատորիա ճանաչելու վերաբերյալ առաջարկ:

4) հայտին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո Որոշման 18-րդ կետով սահմանված կարգով գնահատման արդյունքում նույն որոշման 22-րդ կետով

սահմանված դեպքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին ներկայացնում է հայտը մերժելու վերաբերյալ առաջարկ:

5) ստորագրում է Հանձնաժողովի նիստի վերաբերյալ արձանագրությունները և հետևում աշխատակարգի պահպանմանը:

11. Հանձնաժողովի անդամները՝

1) իրականացնում են փորձարկման լաբորատորիայի կողմից որպես էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչելու համար ներկայացված փաստաթղթերի լրիվ և բազմակողմանի ուսումնասիրություն, ինչպես նաև սահմանված կարգով մասնակցում են գնահատմանը,

2) մասնակցում են հրավիրված նիստի աշխատանքներին և իրավունք ունեն քննարկվող հարցի վերաբերյալ արտահայտել կարծիք,

3) ստորագրում են Հանձնաժողովի նիստի արձանագրությունները,

4) պահպանում են սույն աշխատակարգի պահանջները և ապահովում մրցութային ողջ գործընթացի ընթացքում ստացած տեղեկատվության գաղտնիությունը,

5) Հանձնաժողովի նիստի աշխատանքներին Հանձնաժողովի տվյալ անդամի փոխարեն նիստի աշխատանքներին այլ անդամի մասնակցության դեպքում փոխարինող անդամը պարտավոր է Հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել լիազորագիր,

6) Հանձնաժողովի նիստի աշխատանքներին չմասնակցելու դեպքում առնվազն 1 աշխատանքային օր առաջ պարտավոր է այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովի քարտուղարին՝ նշելով բացակայության պատճառը:

12.Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ստուգում է փորձարկման լաբորատորիայի կողմից որպես էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչելու համար ներկայացված էլեկտրոնային հայտը և դրան կից փաստաթղթերի լրակազմը,

2) էլեկտրոնային հայտն ու հայտին կից ներկայացվող էլեկտրոնային փաստաթղթերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ տվյալ փորձարկման լաբորատորիային տեղեկացնում է ներկայացված հայտն ընդունելու մասին,

3) ներկայացված փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում դրա մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է հայտատուին և առաջարկում 3 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել դրանք:

4) տեղեկացնում է սույն Հանձնաժողովի անդամներին, այդ նպատակով փաստաթղթերի լրակազմն ապահովելուց հետո էլեկտրոնային փոստի միջոցով Հանձնաժողովի անդամներին տրամադրում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթերը և ծանուցում նիստի անցկացման վայրի, ամսաթվի ու ժամի մասին՝ նիստի օրվանից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ,

5) վարում է Հանձնաժողովի աշխատանքների հետ կապված գործավարությունը, կազմում նիստի արձանագրություն և ստորագրում Հանձնաժողովի նիստի արձանագրությունը,

6) համակարգող մարմնի ղեկավարի կողմից փորձարկման լաբորատորիան որպես էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչելու որոշման ընդունումից հետո էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչված փորձարկման լաբորատորիան գրանցում է համապատասխան գրանցամատյանում,

7) յուրաքանչյուր էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիա ճանաչված փորձարկման լաբորատորիայի մասին համապատասխան տեղեկատվություն կամ տեղեկատվության փոփոխություն տեղադրում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական կայքում,

8) իրականացնում է հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ այլ գործառույթներ,

9) պահպանում է սույն աշխատակարգի պահանջները և ապահովում մրցութային ողջ գործընթացի ընթացքում ստացած տեղեկատվության գաղտնիությունը:

13. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: